

3021

Բաճաճարէ Այ. Գ.
Ասկէ Բարսիւնի:

588

88

Դ-24

Դարձու.
1906

2003

2011

ԱԼԷԿՍԱՆԴՐՈՍ Բ. ԲԱՆԳՍԵԷ

մ. 2

ՈՍԿԷ ԻԱՐԱԶԱՆԸ

(Արտատպւած «Բանասէր» ից)



ՅՈՒՆԱՐԷՆԻՅ ԹԱՐԴՄԱՆԵՅ

ՄԵՍՐՈՊ Վ. ՄԱՔՍՈՒԴԵԱՆՑ



ՊԱՐԻՍ

Քաղաքական Ժողովրդական Բանաստեղծական

3, Սիմաբ փողոց

1906

88

Ք-2418

88
P-24

✓

ԱԼԷԿՍԱՆԴՐՈՍ Բ. ԲԱՆԴԱՐԷ

31

ՈՍԿԷ ԻԱՐԱԶԱՆԸ

(Արտատպւած «Բանասեր» իջ)

ՅՈՒՆԱՐԷՆԻՑ ԹԱՐԴԱՆԵՑ

ՄԵՍՐՈՊ Գ. ՄԱՔՍՈՒԴԵԱՆՑ



ՊՆԲԻՍ

Բազմալեզուեան Տպարան Բաամաջեանի

3, Սիմար փողոց

1906

915



1026

39

9

Ա. ԶՆԻԻ ԸՆԿԵՐԻՍ

ሀገሪቱ ለጥቅም ሲሆን ለሀገሪቱ ለጥቅም ሲሆን

ԻՐ ՀԱՅ ՅՈՒՂ ԻԼՅԻՆ

Isa 57

Թարգմանչից

ՀԵՔԵՐԵՈՂՆԵՐԻՆ

— 0 —

Կրֆիս հեղինակն, Աշխատանքի Ս. Րանգաբե (1810-1892), նշանաւոր պե-
տական գործիչ էր եւ բազմակողմէն հմտութեան ու տաղանդի տէր գրող:
«Ոսկե խառագանը» նրա վիպական երկերից մէկն է, որի հայերէն թարգմա-
նութիւնն ընծայոււ է նախօր ընթերցող հասարակութեան: Իցի՛ւ թէ
այս կարգի թարգմանութիւններով կարողանայինք մերովսանն նպաստել
մեր ժողովրդին՝ հետամուտ լինելու իր դարեւոր հարեւանների մտաւոր ու
բարոյական աշխարհի ծանօթացման, դիպի որք անտարբեր է դժբախտա-
բար:

1905 Մարտ 29

Դավիթ

Մ. Վ.

1841 թ. սկիզբներին էր. Վիզոդ զօրավարն Ալթէրի վերադարձաւ իր-
բեւ ընդհանուր կառավարիչ Փրանսական կալուածներէ: Բայց նրա բա-
ցակայութեան միջոցին Տաֆնիի զաշնադրութիւնը տուել էր իր վնասակար
պտուղները. անհետատեսութիւնն ու կոյր վստահութիւնն առաջ բերին
անպատիժ մատնութիւն: Վիզոդ զօրավարը խաղաղեցնելու համար եր-
բեմն իր դէմ գլուխ բարձրացրած Օրանի գաւառը, որ ամենից աւելի տա-
ռապոււմ էր Արդէկադէրի յարձակումներից, քաղաքագիտական մեծ սխալ
էր գործել՝ սոյն էմիրին ճանաչելով իրբեւ ներկայացուցիչ ամբողջ
նրաբների եւ զաշինքը նրա՝ հետ կնքելով, որով ընդունած եղաւ մի կերպ
Արա ազգապետութիւնն ու օրէցօր աւելացրեց նրա ոյժն ու ազդեցու-
թիւնը:

Ներգաւթիտ Արաբը լաւ չահագործեց այս առանձնաշնորհումը: Այն-
րիկեան խորամանկութեամբ զանց արաւ դրուած պայմաններն ու ձեռք
առնելով անխոհմտաբար իրան շնորհուած իշխանութիւնն իր ազգի վրայ՝
վառեց նրա կրօնական մոլեռանգութիւնն ու միանգամ եւս ոտքի հանեց
ամբողջ ամբոխին Ֆրանկների դէմ:

Այնքան առաջ գնաց յանդգնութեան մէջ, որ երբ Ալթէրի կառա-
վարիչը Լա Վալէտան էր, իր վայրենի ձեռաւորների հետ միասին ոտնակոխ
էր անում ահագին տարածութիւններ եւ շատ անգամ էլ սպանութիւնն ու
աւարառութիւններ էր գործում Ֆրանկների թնդանութիւններից մի նետըն-
կէց հետու կամ հէնց նոյնիսկ Ալթէրի զօների առաջ:

Այնպէս որ, երբ Վիդոզն եկաւ, ահազին կոխէր մղելու, մինչեւ որ ֆրանսական տիրապետութիւնն իր ապաստանած ու պաշարուած զինուորացիներս բերելով ամբողջ երկրում տարածէր, ջախջախէր Էմիրի զոռոգութիւնն ու տիրապետողներին աղաւէր տիրապետութեաների ահեղ պաշարումից։

Բայց բարեկենդանի օրերէն որ եկաւ եւ Ալթերի հասարակութիւնը թէ՛ դէմքով թէ՛ բնաւորութեամբ չափուած ձեւուած էր Պարիզի հասարակութեան վրայ։ Նա միակ հոգսն էր տիրել, Էմիր կալուածներ, իսկ արժանիքն զբօսանք ու պար, որովհետեւ ֆրանկ ասածը պարծենում է, որ հրաբուլիսի բերնին էլ լինի՝ պարելու է։ Կառավարչի համար այնքան էլ հեշտ չէր անտես անել այս արժանիքները։

Եւ Վիդոզ զօրապետն իր տանը պարահանդէս ունէր։ Դա՛լ լինէր ում շողում էին լոյսեր ու բաժակներ, ծաղիկներ ու սիրուն կնանիք, այնպէս որ աչքը կ'առնէր ու չէր իմանալ ուր լինելը, աւազակ Ալթերի կողք մի քաղաքում թէ Պարիզի Ա. Գերմանոս արուարձանում։ Մըձուկները չափ մեծ էին, հագնուածքները շատ չքեղ ու վայելուչ։

Տիկիւնները՝ խումբ խումբ ցրուած այս ու այնտեղ՝ իրօք էին քննադատում եւ աչքով չափում կշռում ամէն մի նորեկի, տեսնելու թէ ո՛ւմ հագնուածքի մէջ ի՞նչ թերութիւն կար ըստ նոր աճեւորութեան վերջին օրաթերթի, ուզում եմ ասել՝ Ալթերի հաւածներից վերջին թերթի, քանի որ ելեքարական հեռագիրը կամ դեռ չէր հնարուած կամ եթէ հնարուած էլ էր, նորաձեւութեան լուրերն հաղորդելու չէր ծառայում դեռ։

Տղամարդկանցից երիտասարդները թռչկոտում էին տիկնաց շուրջը, իսկ աւելի հասունները խօսակցում էին օրուայ գէպքի վրայ, այն է՝ մի քանի ժամ առաջ հասած լուրի, թէ մի խումբ Արաբներ յանկարծ դուրս գալով՝ յանդգնել են յափշտակել զօրքերի համար ուղարկուած պաշարը քաղաքից մօտ մի ժամ հեռու։

Միայն մի երիտասարդ կար գեղեցկադէմ որ՝ բոլորից հեռու՝ ո՛չ կանանց հետ էր զուարճանում, ո՛չ աղամարդկանց խօսակցութեան մասնակցում։ Երեւում էր որ խելքն ու միտքն ուրիշ տեղ էր կամ թէ մարդու էր սպասում, որովհետեւ զահլիճի ոսկեզօծ ճրագներից մէկին յենած՝ աչերն անթարթ առել էր զրան։ Այս երիտասարդը Ռիչարդ Դիբալլոնն էր, Ալթերի գլխաւոր ատենի գրագիրը։

Դէմ գիմաց այնտեղին, ուր կանգնած մտածում էր Ռիչարդը, մի քանի կնանց հետ նստած էր եւ մի ուրիշ կին, որ թէեւ վաղուց էր անցել երիտասարդութեան սահմաններից, բայց կերպարանքն էլի գուրեկան եւ հրապուրիչ էր, որովհետեւ հեզութեան եւ ազնւութեան կնիքն էր կրում իր համաչափ ու բարի գէմքին։ Նայուածքն ստէպ դարձնում էր գէպի Ռիչարդը, նրան էր դիտում վշտով ու հոգսերով եւ համակրաբար իր աչերում ցոլում էին նոյնիսկ ամենից թաթեւ ամպերը, որ պատում էին երիտասարդի ճակատը։ Ռիչարդի մայրն էր։

Տիկին Դիբալլոնի սիրտը սիրոյ եւ անձկութեան վառարան էր. վաղ հասակում ամուսնանալով իր սրտով սիրածի հետ՝ ամբողջ կեանքը նրա՛ն էր նուիրել եւ իր գոյութիւնը նոյնացրել էր նրա գոյութեան հետ. գիւնը ցերեկ ապրած նրա գրկում՝ չէր ըմբռնում, թէ առանց նրան երջան

կութիւն կը լինէ՞ր կամ նոյնիսկ կեանք կարո՞ղ էր լինել, եթէ նա չըլինէր։

Բայց երբ անկայուն թախան երես թեքեց Նապոլէոնի զենքերից եւ հարիւրօրեայ մէտէորն հանգաւ Վատերլոյի դաշտերում եւ աշխարհակալն ընդ միշտ հեծելու էր Ատլանտեան Ովկէանի անձանօթ ալիքներում, Պ. Դիբալլոնն իր պաշտած կողակցի մօտ գալով՝ լալով ողբալով համբուրեց նրան եւ որդուն նրա ծնկներին վրայ դնելով՝

— Լա՛ւ պահիր սրան, ասաց՝ սովորեցրու սիրել իր հայրենիքը, առաքնութիւն գործել, յիշել իր հայրին, իմ տեղս թող սա մնայ քեզ մօտ։ Ես յոյս ունէի, որ քաղցրութեամբ կենակցելու էինք մինչեւ զերեւման, բայց անողոք պարտքն այլ բան է հրամայում ինձ։ Կայսրը, իմ բարեբարս, փրանսայի հերոսը, գերի է տարուում։ Անարժան կը լինէի քո սիրոյդ, եթէ նրան լքանէի այսօր։ Մնաս բարո՛ւ։ Աստուծով էլի կը վերադառնամ. իսկ առ այժմ քեզ եմ վստահանում մեր էս որդուն։

Այս խօսքերի վրայ Տիկին Դիբալլոնը կիսամեւ ընկաւ դետին, Աղէտը խիստ ծանր էր, բայց ի՞նչ արած, պէտք է ընդունէր ու տանէր համբերութեամբ ու սիրով։ Բայց այս անջատումն արժատախիլ էր անում նրանից ամէն երկրաւոր յոյս։ Լաց եղաւ, կողկողեց, աղբսեց, բայց ի զուր. Դիբալլոնը, թէեւ խոցուած սրտով, թողեց ու հեռացաւ, խոստանալով որ մի տարուց կը վերադառնայ։

Դժբախտ կինը գիշերները լալով էր անցկացնում, ցերեկները չափելով ամէն մի վայրկեանը, որ անցնում ու պակասեցնում էր կարօտի ժամերը։ Բայց տարին անցաւ եւ տարւայ վերջին ոչ թէ Դիբալլոնն եկաւ այլ իր մահուան գոյժը...

Հա՛րկ է նկարագրել թշուառ այրու յաւաստութիւնը։ Օրերով բժիշկները վախում էին նրա կեանքից, վերջապէս մի օր էլ գիրկն առաւ փոքրիկ Ռիչարդին ու գոչեց։

— Ո՛չ, չե՛մ մեռնիլ, Գեղ ինձ վստահացաւ քո հայրը. երկնուց ինձ է նայում ու պատուիրում, որ քեզ անտէր չթողնեմ։ Սիրո՛ւն տղաս, նրա իսկական պատկերն ես. ես քեզ համար պիտի յաղթեմ իմ յուսա, հատուկեան, պիտի յաղթեմ դիւցազնի՝ յաղթութեամբ։

Եւ ինչպէս որ ասաց, այնպէս էլ արաւ։ Այդ օրուանից աւելի հանդարտ էր երեւում, այսինքն՝ իր կսկիծը ծածկում ժպիւրհ աչերից, իսկ սէրը կենտրոնացնում միայն եւ միայն իր որդու վրայ, որ նրա աչքում մի սիրեցեալ աւանդ էր իր մարդուց, միակ շաղկապն իր ու կեանքի միջեւ. միայնիկ կապն այն անցեալի հետ, ուր ամիոփուած էր իր երջանկութիւնը։

Մանկիկը քանի մեծանում էր, այնքան էլ ստանում էր հայրի կերպարանքի նմանութիւնը, եւ նոյն չափով էլ աճում էր մայրինի գուրդուրանքը՝ մոլեգին պաշտումի հասնելու աստիճան։ Ինչպէս մանկու թեան ա-

ռաջին օրերումն էր նստո մ'նրա օրօրոցի կողքին, անքուն անհանգիստ հեկում նրա մէն մի շարժումը, մէն մի քթթումն աչերի, մէն մի ձայնը, այնպէս էլ քանի մէջանում, դառնում էր պատանի, օտարելով հաղուադիւտ ձերբերով, իր էլ մայրիկի հոգածութիւնն էլի հետեւում էր նրան, որովհետեւ նրա բերկրանքն իր միակ երջանկութիւնն էր եւ նրա վնասութիւնն իր սրտին կսկիծ:

Եւ որովհետեւ զեռ մի քանի օր առաջ իր սրաթափանց սրտով մելամաղձութեան մի ստուեր էր երեւան հանել որդու գէմքին, ուստի եւ այդ բոլորէն՝ դահլիճի մի աշխարհից անհանգիստ դիտում էր նրա գէմքն ու այդ գէմքի վրայ նկարուած մտախոհութիւնը: Բայց տեսաւ վերջապէս, որ նա տեղից երերաց ու ժպտեցաւ զուարթագին. դա վրալ ինքն էլ մըլխիթարուած՝ դարձաւ գէպի իր շուրջը նստած կնանիքն ու սկսաւ խօսակցել նրանց հետ:

Բայց եթէ Տիկին Դիրալլոնը մէկ էլ նայէր, պիտի տեսնէր որ ոչ միայն ժպտի խոյն անհետացաւ որդու շրթներից, այլ զեռ նրա այտերի վրայ մի շառագունանդ էլ եկաւ անմիջապէս, եւ թէ այդ երկու երեւոյթներ էլ շարժառիթն էր կառավարութեան գանձապետ Պ. Սէն Մարտէնի ու իր քրոջաղջկայ Յուլիայի ներս մտնելը Դահլիճի դռնից:

Սրանց դալը ոչ միայն Ռիչարդի, այլ կարող եմ ասել բոլորի սիրտը թունդ հանեց. ամէն աչք դարձաւ գէպի Յուլիան եւ ամէն դիտակ ուղղուեցաւ գէպի նա: Տղամարդիկ զմայլանքով դիտում էին նրա խոշոր ու վառվռուն աչերի անօրինակ զեղեցկութիւնը, նրա ազոռի փետրի նման թուխ մազերը, այտերի ոսկեշող փայլը, որ տալիս էր նրա գէմքին զարնանային արեւի նմանութիւն. իսկ կնանիք ամէն բան միառմի հետաջօտելուց յետոյ ակամայ խոստովանում էին, որ գեղով չնորհալիէր, հազնուածքը չունէր ոչ մի թերութիւն:

Վիզոյ զօրավարը ջերմ ընդունելութիւն ցոյց տուաւ նորեկներին, շենց որ իրար ողջունեցին եւ Յուլիան յառաջանում էր գէպի միւս կնանիքը, Ռիչարդը մօտենալով նրան՝

— Դէթ այս գիշեր, ասաց, Օրիո՛րդ, Կոսթիւն* ինձ հետ էք բռնելու: Ամենից վաղ ես խնդրեցի այս գիշեր:

Յուլիան բերանը բաց էր անում որ պատասխանէր, եւ հաւանական է որ ընդունէր, ետեւից վրայ հասաւ զօրապետի թիկնապահներից մին, Կոմս դը Լաֆէրիէրը, փայլուն արտաքինով մի երիտասարդ, որ իր ազնուական ծագումովն ու մեծաքանակ հարստութեամբն էր պարծնում, եւ լաւ էլ պարող էր,

(*) Մի տեսակ պար:

— Ո՛ր, ասաց, բորբոքած, ձեզանից առաջ ուրիշ խնդրող է եղել: Օրիորդ Յուլիան ինձ էր խոստացել Կոսթիւնը, ինչպէս եւ առաջին Վալսը, որ ահա սկսում ենք: Այնպէս չէ՞, Օրիո՛րդ:

— Այո՛, ի՛նչպէս: Ճաշում եմ, Պարոն Դիրալլոն, ասաց Յուլիան հրեշտակային ժպտով, ձեռն երկարելով կոմսին:

Շան աղջիկն անխղճօրէն ստում էր:

— Այս երեկո՛յ էլ չէ, քրթմնջաց Ռիչարդը՝ չուռ գալով որ հեռանայ. եւ նրա գէմքը, հոգու պայծառ հայելին, կարմրից դառաւ դեղին:

Յուլիան մի բոլբ լսիկ նայեցաւ նրան: Յետոյ՝ պարի մէջ իր տեղը բռնելու համար՝ նրա կողքովն անցնելիս՝

— Դեռ երրորդ հակապարը կայ, ասաց՝ կ'ուզէ՞ք:

Ռիչարդն ի նշան հաճութեան՝ սառնութեամբ գլուխը խոնարհեց ցած, եւ գէմքի զեղնութիւնը քանի գնաց չատացաւ:

— Հա՛յտ ենք ուրեմն, յարեց Յուլիան, ձգելով նրա վրայ մի գիւթիչ ակնարկ:

Ռիչարդը մէկ էլ գլուխը ցած կախեց եւ արեւն ամբողջ հաւաքուեցաւ իջաւ նրա այտերը:

Բ.

Երեկոյթը չափ կենդանի երեկոյթ էր, եւ Յուլիան՝ զուարթալիկ՝ դառնում էր աղօթիքի նման ու ճոռոզում ծիծեռնակի պէս:

Առաջին պարից յետոյ եկաւ նստաւ Տիկին Դիրալլոնի մօտ, որ այսպիսի պարագաներու մայրութիւն էր անում նրան, քանի որ մայր չունէր:

Յուլիայի հայրը նոյն կալուածքից եկաւ Ալմերի, որտեղ եւ սպանուեցաւ: Այդ օրից աղջիկը մնաց տիկին Սէն Մարտէնի մօտ, որ նրա քեռակրնն էր եւ ամենից մօտ ազգականը: Բայց թոյլակալով լինելով՝ չէր կարողանում ամէն երեկոյթում նրան հետեւել. այդ պատճառով էլ Յուլիայի գրութիւնը չափ վատ ու անհաճոյ կը լինէր, եթէ չլինէր տիկին Դիրալլոնի նման մի համակիր ու բարերար կին, որ տարածէր նրա վրայ իր հովանաւոր ստուերը:

Պարից յետոյ օրիորդի կողքին նստաւ եւ իր պարընկերը, եւ տեսակցութիւնները շարունակուեցան առաջուանից էլ աւելի կենդանի ու զուարթ: Մինչեւ երրորդ հակապարն սկսելը Ռիչարդը բնաւ մօտ չգնաց Յուլիային. զգուշանում էր մինչեւ անգամ առաջովն անցնելու կամ աչեքը բարձրացնելու նրա վրայ: Բայց ինչպէս որ մագնիսական հոսանքին

ենթարկուողներն աչքի առաջ չեղած բաններն էլ են ահա՛նում եւ լսում ինչ որ շատ հեռու է, այնպէս էլ սա շարունակ աչքի առաջ ունէր Յուլիանին ու երիտասարդ Կոմսին եւ թէպէտ դահլիճի միւս ծայրն էլ քաշուեցաւ, բայց էլի տեսնում էր առաջնի զուարթ ժպիտն ու լսում մի սի խը՝ ուովիչ ծիծաղը. որովհետեւ Ռիչարդն ինչքան էլ աշխատէր այդ բողոքին հակառակն ապացուցանել ինքն իրան, այսքանս ստոյգ էր, որ Յուլիանին պաշտում էր մի այնպիսի խանդավառ ու բանաստեղծական հոգեւ ամբողջ զօրութեամբ, որպիսին իրն էր :

Մանաւանդ լինում էին վայրկեաններ, երբ օրիորդը նկատում էր նրա տածած զգացումն ու ինքն էլ փոխադարձաբար նոյնպիսի զգացումով համակուում դէպի նա : Բայց Յուլիանի նկարագիրն հակասութեանց մարմնացումն էր. մէկ, տեսնում էիր, երկչոտ ու քաշուող, մէկ՝ աղամարդու պէս համարձակ, ընդունակ խիստ զգացումների, թէեւ միանգամայն թեթեւ ու թուրբուն. ցատակում բոցավառ հրաբուխ, երեսից՝ ծաղկադալար, մի սահուն քամէլէոն, որ շրջապատի զոյնների հետ փոխում է եւ իր գոյնը :

Նրա համար էլ ա՛յն բողոքն, երբ Ռիչարդը կարծում էր, թէ երեւան էր բերել արդէն ճշմարիտ համակրութիւն եւ անկեղծ զգացում օրիորդի սրտում, եւ մի բառ, որով պէտք է այդ բողոքին իր բովանդակ կեանքը փոխարկուէր եղեմական բերկրանքի, իր շրթներում սեղմուում էր բոցավառ, յանկարծ տեսաւ Յուլիանին թեթեւամտօրէն խփուելիս, խենդի պէս սին հաճոյքների ետեւից ման գալիս եւ այդ ասելիք բառը շրթներից զառնութեամբ ետ դարձաւ դէպի սիրտը եւ ինքը մնաց շուար թէ ո՞վ էր, որին սիրում էր. ամենից կատարեալ կինը թէ ամենից հասարակ :

Վիզով զօրավարի ժամանելուց յետոյ՝ երեւում էր, որ Յուլիան ամենից աւելի տարուեցաւ Կոմս դը Լաֆէրիէրի ոսկեզարդ դարձմանակին, արծաթ փետրիկներին, խարտեալ բեղերին, ազնուական անուներն, հարստութեան հոշակին ու գերմանական պարին : Ամէն պարի, ամէն զբօսանքի, ամէն ման գալու, հետի թէ ձիով, Կոմսը միշտ նրա մօտ էր լինում եւ թիկնապահի շուքն ու փայլն այնպէս էր նսեմացնում Ռիչարդի պատկերը, որ, ինչպէս տեսանք, Յուլիան սուտ իսկ խօսեցաւ նրանից խոյս տալու եւ Կոմսիլին արժանաւոր պարողին ընծայելու համար :

Հասաւ վերջապէս երրորդ հակապարը Ռիչարդն եկաւ Յուլիանի մօտ՝ յուզումից ամբողջ դողողալով եւ լուռ գլուխ տալով՝ առաջնորդեց նրան իր տեղը : Երբ ուզեց խօսք ուղղել նրան, սկզբում ձայնը խեղդուեցաւ արտասուքից. բայց Յուլիան այնքան զուարթ, այնքան ուրախ էր, այնքան սիրով, այնքան մտերմաբար էր խօսում հետը, այնքան էլ զեղեցիկ էր, որ Ռիչարդը՝ չնայած անտարբեր ու սառն մնալու, պարից յետոյ էլ նրանից ընդ միշտ հեռանալու որոշումով էր եկած՝ նրա մօտ, նախ յուշուեցաւ, ապա անձնատուր եղաւ մի անասելի կախարդանքի եւ հակա-

պարը վերջանալուց յետոյ երեսի նման վառահայցաւ նրա առաջին անոյշ նայուածքին ու բարախուն սրտով փութաց նստել թոյն պարապ տեղում, որ նա ցոյց տուաւ իր կողքին :

Բայց մինչ խօսակցում էին եւ խօսակցութիւնն ստացել էր բոլորովին մտերմական բնաւորութիւն եւ Ռիչարդը սաւառնում էր հօթնե-րորդ երկինք, մի էլ տեսար դահլիճի միւս ծայրից վրայ հասաւ Կոմսը որ առաջին պատահած աթոռն առաւ ու նստաւ Յուլիանի դէմ դիմաց, այնպէս որ խօսակցողներն երկուս էին Կոմսն երեք, Ռիչարդը քիչ մնաց իրան ուտէր, բայց կարծեց, կա՞ր գէթ ինքն իր խելքով պատրուակեց թէ կալծուած է, որ անտեղի էր այդ պահուն վեր կենալ ու հեռանալ :

Դէսից դէնից խօսելուց յետոյ խօսեցան եւ քաղաքի շուրջն երեւան եկած Արարների մասին :

— Անշուշտ, Արարները որ գան մեզ վրայ յարձակին, կը պաշտպանէք մեզ, չէ՞, պարո՛ն Կոմս, ասաց Յուլիան դը Լաֆէրիէրին մի անոյշ շեշտով :

— Այս սուրը Ձեզ համար է, պատասխանեց աստիճանաւորը : Ձեզ պաշտպանելուց յետոյ կարող է դիմադրել զեռ ամբողջ Արաբիային ու մեր միւս հարեւան երկիրներին էլ : Ես որ կամ, Ձեր ասպետն եմ, մի՛ վախէք :

— Չասե՛ս ուրեմն Օրիորդ արիւններս թափելու ենք Ձեզ պաշտպանելու համար, վրայ բերաւ իսկոյն Ռիչարդը ոգեւորուած, ու մեր մարմինները պատնէշ են դառնալու :

— Տեսնո՛ւմ էք, Օրիորդ, ի՛նչ կախարչն էք եղել, ասաց Կոմսն հեգնաբար : Թէ՛միտի խաղաղասէր սպասաւոր պ. Դիբալլոնին մի բողոքում դարձրիք արիւննա՛ջաւ մարտիկ : Պ. Դիբալլոնը ձեռնամուխ է լինում մեր իրաւունքներին :

— Ռիչարդն ուզեց մէկ վերաւորել նրան խօսքով, բայց վախեցաւ որ ծիծաղին իր վրայ, ու լռեց :

— Տղամարդ որ լինէի, ասաց Յուլիան Լաֆէրիէրին նայելով, հիմա արդէն զինուոր էի : Տղամարդու միակ արժանի կոչումը զինուորութիւնն է : Ի՛նչ աւելի ազնիւ բան քան յինուրի իր քաջութեան վրայ ոչ ոքից չվախենալ ու զեռ իրկել ու պաշտպանել իր սիրելիներն եւս :

— Եւ քաջութիւնն, ասաց Ռիչարդն Յուլիանին՝ հոգեով չափ վերաւորուելով նրա թեթեւ խօսքերից, կարծում ես զինուորի համազգեստի տա՞կ է թագնուած լինում :

— Չէ՛, պատասխանեց ծիծաղկոտ օրիորդը, է՛դ էր պակաս, որ մեզ համոզէիք թէ դատաւորների խոյրերի տակ միայն քաջութիւն կայ : Չէ՞, պարո՛ն Կոմս :

— Օրիորդ, պատասխանեց Կոմսը քրքշալով, Արարները որ մի օր արիւնելու լինին Ալմէրիին, իմ խորհուրդն է որ Ձեր փրկութիւնը դատաւորանում շորոնէք :

— Փորձու թեան ժամը որ զայ, ասաց Դիրալլոնը կրակ կտրելով, կը տեսնէք ո՛ւր է ճշմարիտ քաջութիւնը :

— Ո՛հ, Պարոն Դիրալլոն, ասաց Յուլիան, Դուք մեզ յունական կազմանքներն էք ուղարկում: Երէկ ձեռով գնացի Մեծ Աղբւրը, եւ այնտեղ սօսու տակ մոռացայ ոսկէ խարաղանս: Ի՞նչ առաջ Պարոն Կոմսին էի առնում, որ վաղը գնայ բերէ, եւ Կոմսը պատասխանեց, որ անկարելի է, որովհետեւ ճանապարհն Արաբները փակել են: Ա՛րդ, եթէ Դուք իսկապէս հերոս էք, ինչպէս ասում էք, սրանի՞ց էլ լաւ առիթ, ապացուցէ՛ք. գնացէ՛ք, խարաղանս բերէք, որ քաջութեան պսակը տամ Ձեզ:

— Ներողութի՛ւն, Օ՛րիորդ, չասացի թէ հերոս եմ, պատասխանեց Րիչարդն յօնքերը պոստելով:

Եւ գլուխը կախ՝ հեռացաւ նրանից, որովհետեւ ուր պար էին սկսում, ամբողջ գլխերն է՛լ չմօտեցաւ նրան:

Կոսիլլի ժամանակ Յուլիան տեսաւ նրան մի անկիւնում՝ ոտի վրայ կանգնած, դեղնած ու անշարժ եւ ե՛լաւ հրաւիրեց մրասին մի շրջան անելու: Րիչարդը պարեց ու հեռացաւ՝ խոր գլուխ տալով ի նշան շնորհակալութեան, առանց սակայն մի բան ասելու: Ապա մեկնեցաւ տոն մայրի հետ միասին:

Գ.

Միւս օրը կիրակի էր եւ դատարանը փակ: Րիչարդն առաւօտ վաղ ձին թամբեց ու ատրճանակն առնելով ձեռը՝ հրաժեշտ տուաւ մայրին՝ ասելով թէ գնում է որսի: Տիկին Դիրալլոնն յորդորեց, որ դուրս չելնէր, մինչեւ որ Արաբներն հեռանային քաղաքի շրջակայքից. բայց որդին հանդարտեցրեց նրան՝ ասելով, որ նրանք արդէն հեռացած կը լինին իրանց տեղերն եւ թէ, հեռացած էլ չլինին, ինքը ճանապարհները լաւ է իմանում:

Ապա ձիւ հեծաւ ու քաղաքից դուրս գալով՝ դիմեց ուղղակի դէպի Մեծ Աղբւրը: Բայց, ինչպէս ասաց, ճանապարհներին լաւ ծանօթ էր. գրա համար էլ կէս ժամ արշաւելուց յետոյ հասարակաց ուղին թողեց ու շեղուելով մտաւ մի անծանօթ կաման, որ իջնում էր բարձր մացառներ ձիջով՝ ծածկելով թէ՛ իրան, Րիչարդին, եւ թէ՛ իր ձիուն:

Այսպէս սուս փուս քսան բոպէի չափ գնաց. բայց վերջն հասաւ մի տեղի, ուր ուղէր չուղէր բաց ճանապարհով միւս կողմն էր անցնելու: Տեսնում է որ Արաբներն անցքը բռնել էին: Անձայն անչուկ մէկից

մէկ մարակում է ձին, յարձակում նրանց միջով ու մինչեւ նրանց խելքի գալը՝ կայծակի արագութեամբ գցում է իրան զիւմացի կամանի մէջ:

Արաբներն ետեւից ընկնում, հալածում են, բայց ինքը դիւրգիրին քաջ ծանօթ եւ նրանցից էլ բաւական առաջ անցած լինելով՝ հասնում է մինչեւ սօսու մաս, Յուլիայի ասած տեղը, տեսնում է խարաղանը, վաղու՛մ վերցնում է եւ անմիջապէս նախ դէպի աջ, յետոյ դէպի ձախ դառնալով մի կիք է որոնում հալածողներին ձեռից գլուխն աղատելու համար:

Բայց ուշ էր այլեւս: Արաբներն հասել էին իրան: Իրա համար էլ ուրիշ ընթացք բռնեց. ձիու գլուխն անմիջապէս դարձրեց նրանց դէմ ու յանկարծական յարձակումով ատրճանակն արձակեց առաջին եկողի վրայ ու վիրաւորեց նրան: Յետոյ ատրճանակը գետին չպրտելով՝ քաշեց կողքից կախած սուրն ու սկսաւ կատաղի կռիւ մղել՝ այն վճռական յոյսով, որ պիտի ճեղքէր թշնամի ամբոխն ու ճանապարհ լաց անէր իր համար:

Բայց ի զո՛ւր: Շատ չանցաւ եւ շրջապատեցին նրան յիսուներից աւելի մարդիկ, որոնց թիւն ամէն վայրկեան աւելանում էր: Րիչարդի ճիգերն յուսահատական էին. բայց վերջապէս սուրը կոտորուեցաւ ձեռում եւ ոտիպուեցաւ անձնատուր լինել: Նրա քաջութիւնը մեծ պատկասանք ներշնչեց Արաբներին:

Նրան ձերբակալեցին թէ չէ՝ քաշ տուին սարի անծանօթ ու անմատչելի կողմերից մին եւ ետեւից շալաւուրջ հօկողութեան:

Րիչարդն երբ մենակ մնաց իրա համար կտրգուած առաջին պահնորդի հետ, մօտեցաւ նրան եւ ասաց.

— Ուզո՞ւմ ես փող աշխատել:

— Ուզում եմ, պատասխանեց Արաբը:

— Ինչ ուզես, կը տամ, միայն թէ ազատ թողնես ինձ գնալ:

Արաբը գաշոյնը մերկացրեց ու

— Դու խո՞ւր կը կտրեմ, ասաց, թէ որ տեղիցդ ժաժ ես եկել կամ թէ մէկ էլ էդ խօսքն ասել ես:

— Լա՛ւ, խարաղա՞նս էլ Ալթէրի չեմ տանիլ:

— Ի՞նչ կը տաս:

— Հաղար ֆրանք:

— Կը տանիմ:

— Դիր գրեւ գիտե՞ս:

— Գիտեմ:

— Կը գնաս Ալթէրի ման կը գաս ու կը գտնես պ. Սէն Մարտէնի տունը. այնտեղ կը հարցնես նրա քրոջ աղջկան Յուլիա Բորսային, — գրիւր այս անունը, որ չմոռանաս, — եւ նրա ձեռքը կը տաս այս խարաղանը:

— Եւ ի՞նչ ասեմ:

— Ո՛չինչ:

— Իսկ եթէ հարցնէ՞:

— Չես պատասխանիլ :

— Փո'ղն ո՛ւ մնից եմ աննելու :

Րիչարդը մատիցն հանեց ոսկէ մատանին ու շարունակեց .

— Յետոյ կը որոնես Տիկին Դիբալլոնին այս մատանին կը տաս իրան եւ կ'ասես որ Արաքները որդուդ բռնել են , բայց որդիդ ողջ է : Մայրս քեզ կըտայ հաղար ֆրանք :

— Գուցէ չհաւատայ :

Դիբալլոնը թղթի վրայ արաքերէն գրեց հետեւեալը .

«Մի՛ տրտմի՞ք ողջ եմ : Դրաբերիս տուէք հաղար ֆրանք եւ ազատ թողէք» :

— Այս որ տաս ասաց , կը հաւատայ :

Արաքն առաւ տոմսակը , ուշի ուշով կարդաց , պահեց գոտու մէջ ու հերթը վերջացաւ թէ չէ՝ ձին հեծաւ ու ճանապարհ ընկաւ :

Դ .

Պարահանդէսի միւս օրը Վիդուդ զօրավարը ճաշ էր տալիս Ալֆէրիի առաջնակարգ ընտանիքներին մի հրաժեշտի առթիւ . որովհետեւ մեկնելու էր երկրի ներսերը՝ նախ քաղաքի շուրջն հաւաքուած Արաքներին վանելու եւ յետոյ այց ելնելու ներքին գաւառներին ու կազմակերպելու պաշտպանողական մարտի նոր դրութիւն :

Հրաւիրուածներն արդէն եկել էին եւ նրանց մէջ էին մեզ ծանօթ պ. Սէն Մարտէն ու իր քրոջ գուստրը , որին էլի չըջապատել էր կոմս դը Լաֆէրիէրը : Տիկին Դիբալլոնը գրով ներում էր խնդրել , որ անկարող էր ճաշի գալու . որովհետեւ նախ՝ գիշերը շատ էր յոգնել եւ երկրորդ՝ սպասում էր որդուն , որ գնացել էր օրսի եւ դեռ չէր վերադարձել :

Դեռ սեղան չէին նստած , երբ ծառան ներս մտաւ ու յայտնեց Յուլիանին , որ մի մարդ գրտում իրան է ուզում : Յուլիան գնաց դուրս եւ մի քանի րոպէ յետոյ վերադարձաւ՝ դէմքը կրակի պէս կարմրած ու ոսկէ խաւարանը ձեռին :

— Ի՞նչ եղաք , Օ' րիօրդ , հարցրեց իսկոյն Լաֆէրիէրը՝ վազելով նրան մօտ , հենց որ տեսաւ նրան այդպէս վրդովուած ներս մտնելիս :

— Տեսնում էք , խաբաղանս ուղարկեց , ասաց Յուլիան խորհրդաւոր կերպով , յուզուած ու ցոյց տալով խաբաղանը եւ ձեռները պահելով կրծքին՝ ասեաւ սրտի ուժգին զարկերը կասեցնելու համար :

Ո՛հ , ի՞նչպէս :

— Տուել է մի Արաքի որ բերէ . ինչ որ հարցրի , ո՛չ մի պատասխան չտուաւ :

— Օ՛ , չասե՞ս , պ. Դիբալլոնը ձի նստելու մէջ , ինչպէս ասում են , հատը չունի եղել , հեգնեց կոմսը ծիծաղելով :

— Հերի՛ք ծաղրէ՛ք : Պա՛րոն կոմս , պատասխանեց Յուլիան լուրջ դէմքով : Նա ցոյց տուաւ զարմանալի քաջութիւն . իրան ահագին վտանգի ննթարկեց իմ մի անմտութեան պատճառով : Անկեղծ եմ ասում , ես իմ արածի վրայ զղջում եմ :

— Ի՞նչ վտանգ , ի՞նչ բան : Ո՛վ չի իմանում , որ Արաքներն անասպելական էակներ են . ո՛վ գիտէ , ո՛ւր են գնացած եղել , որ Դիբալլոնը իմացել է ու առիթից օգուտ քաղել . — յերկրեց կոմսը՝ վրդովուելով պարմանուհու կտրուկ պատասխանից :

Յանկարծ դուռը բացուեցաւ ահագին ժխորով եւ սպասաւորը բարձրաձայն ազդարարեց .

— Տիկին Դիբալլոնը :

Եւ անմիջապէս ներս խոյացաւ Րիչարդի մայրը գրեթէ խելակոշտ :

— Բռնե՛լ են , սարե՛րն են քարշ տալիս . պիտի սպաննեն , զոչում էր խեղճ կինը մինչ Վիդուդ զօրավարն ատաջ անցած՝ ուզում էր ջերմ կերպով ընդունել նրան :

— Ո՛ւմ են բռնե՛լ , ո՛ւմ պիտի սպաննեն , ասացէք տեսնենք , տի՛կին , ասաց նրան սիրազեղ չեչուով :

— Որդո՛ւս , որդո՛ւս են բռնել , պիտի սպաննեն . Արաքներն են բռն . նեկ , գոռում էր զժբազդ մայրը : Զօ՛րավար , օգնեցէ՛ք , փրկեցէ՛ք , որդուս : Զգրտէ՛ք , որ որդիս ինձ համար ամէ՛ն ինչէ : Զգրտէ՛ք , որ առանց նրան կը մեռնիմ : Որ մե՛ռնիմ , ի՞նչ օգուտ : Մահով կը փրկե՞մ նրան : Ո՛հ , երեւակայեցէ՛ք , Արաքները բռննեն նրան , սարե՛րը քաշ տան : Օգնեցէ՛ք , օգնեցէ՛ք :

— Տիկին , ասաց զօրապետը , հանդարտեցէ՛ք : պատմեցէ՛ք եղածը :

Տիկին Դիբալլոնը պատմեց , որ որդին առաւտուն դուրս էր եկել օրսի , խոստանալով որ մինչեւ երեկոյ կը վերադառնայ , իսկ մի քանի րոպէ առաջ մի Արաք եկել տուել է իրան նրա մատանին ու նրա մի ինքնագիր երկտողը , թէ ձերբակալուած է Արաքներից :

Եւ այս ասելով՝ ցնորածի պէս փախեցաւ զօրավարի ոտներին :

— Որդո՛ւս , գոչում էր , որդո՛ւս Զօ՛րավար :

Եւ մեռելի նման ընկաւ գետին :

Յուլիան , որի դէմքին պատեց մահուան դալուկը , օգնութեան փու-

Թաց նրան : Իսկ Վիզոգ զօրավարն ինքն էլ բո կողմից աղաչելով՝ Տի-
կին Դիբալլոնին դրաւ բազմոցի վրայ :

— Տիկին , ասաց , անհոգ կացէք : Բսան եւ չորս ժամ չանցած՝ Զեր
որդուն ինձնից պահանջեցէք :

Եւ դառնալով դէպի ներկայ եղող աստիճանաւորները՝

— Պա՛րոններ , ասաց , ձեզ հրաւիրել եմ ճաշի , բայց ձեզ ճաշի՛ց էլ
լաւ խնջոյք եմ տալու : Դէ՛հ , մի մի բաժակ քամենք ու թամբենք ձիերը :
Խուճենք պատրաստ են : Կէս ժամից ճանապարհ կ'ընկնինք : Տիկիններն
ու Պարոններն այստեղ թող մեր կենացն ու բարեբաւասութեանը խմեն :
Իսկ ընթրիքի ժամանակ իմ տեղս կը նախագահէ Կոմս դը Լաֆէրիէրը : Դի.
բալլոնը Ֆրանսայի արժանաւոր զաւակներէց մին է : Կէս գիշեր չեղած՝ նա
պէտք է ազա՛տ լինի :

Ասաց եւ ընդհանուր խանդավառութիւնն համակեց բոլորին : Տի-
կին Դիբալլոնն ելաւ ոտքի եւ եթէ զօրավարն արդելք չլինէր , պիտի համ-
բուէր նրա ձեռը : Աստիճանաւորները մի մի բաժակ քամեցին՝ միմեանց
կենացն ու փութացին իրանց խմբերի մօտ : Կէս ժամ յետոյ Վիզոգ զօրա-
վարն առաջ անցաւ ժողովրդի կեցցէներէ միջով :

Տիկին Դիբալլոնը կիսամեռ փոխադրուեցաւ իր տունը՝ Յուլիայի հետ
միասին , որ մի րոպէ անգամ չէր ուզում թողնել նրան : Օրիորդի առջին
շառաղնութեանն յաջորդեց ոյժերի կատարեալ նուաղում : Աչերն անթարթ
ու անշարժ մնացին եւ բերանն անխօս :

Դիշերը Տիկին Դիբալլոնի դողը բռնեց եւ թր տազնապնդում չա-
րունակ որդուն էր կանչում , կանչում էր ամենից գողտր անուկներով .
հարցնում էր Յուլիային թէ գիտէ՞ր ո՞վ էր սպանել նրան , ինչո՞ւ է սպա-
նել : Ասում էր , որ « մարդս նրան ինձ է վստահացել , ինձնից էլ պահան-
ջում է » :

Երբեմն վեր էր կենում տեղից , ուզում էր դուրս գալ անկողնից՝ վա-
զել զօրքի ետեւից , որ նախ ինքը կտրէ նրա կապերը , նախ ինքն առնէ նը-
րան իր գիրկը : Իսկ երբ տենդը դադարում էր եւ խելքը գլուխն էր գա-
լիս , լացում , կոծում եւ հարցնում էր « զօրքից ի՞նչ լուր » :

Միւս օրն առաւօտուանից ցնծագին լուրեր տարածուեցան ողջ քա-
ղաքում : Հազիւ թէ լոյսը բացուած էր , երբ Կոմս դը Լաֆէրիէրը Տիկին
Դիբալլոնի մօտ գալով՝ յայտնեց նրան , որ զօրապետից նամակ է եկած ,
թէ դիշերն յարձակել է այն Արաբներին վրայ , որոնք քաղաքի չուրջը բռնել
էին զանազան դերձեր , թէ մո՞տ մասին բնաջինջ է արել , իսկ մնացած-
ներին յաջողութեամբ հալածում է եւ յոյս ունի , որ շուտով այդ
տակաւաթիւ փախստականներին էլ կը բռնէ ու որդուն կը կորզէ նրանց
ձեռից :

Ա՛յս էր ուրեմն ա՛յնքան անհամբեր , ա՛յնքան անհանգստօրէն ըս-
պառուած լուրը . ա՛յս օրին յառել էր խեղճ կինն իր բոլոր յոյսերը : Եւ

այս լուրն էլ եկաւ , որ կրկին խորոտուէ նրան կասկածներ : Ծովի կամ ,
լաւ եւս , յուսահատութեան անդունդի մէջ , Բայց եւ ի՞նչ անէր : Ուզէր չու-
զէր պիտի սպասէր ու չափէր իւրաքանչիւր վայրկեանը , որ անց էր կե-
նում , վայրկեա՛նը , որ նրա աչքում մի մի դար էր տաղնապի , չարագուշակ ե-
րեւակայութիւններով ու դժնդակ տանջանքներով լիքը մի դար :

Սպասում էր , այո՛ , եւ կարծես համբերութեամբ ու օրով . բայց
Յուլիան՝ որ մտահոգ նայում էր նրան , տեսնում էր որ նայուածքը նուա-
զել էր , չրթները տենդային շարժման մէջ էին եւ ձեռները ջերմից
կրակ էին կտրել :

Վերջապէս Կինդաթի երեկոյեան դէմ , երբ Յուլիան նրա մօտ
էր , սենեակի դուռը բացուեցաւ :

— Կոմս դը Լաֆէրիէ՛րը , նամա՛կ , նամա՛կ է բերում ինձ համար ,
դուք Տիկին Դիբալլոնն ու վեր թռաւ տեղից , արտասովոր ոյժով նե-
տուեցաւ դէպի Կոմսն ու փարեցաւ նրա բազկին : Կոմսի դէմքը տխուր էր ,
եւ նամակը դժուարութեամբ տուաւ նրան : Նամակը զօրապետից էր ,
որ գրում էր .

« Տի կին , ի՛նչ քաջութիւն որ ասէք , զինուորներ : զործեցին մեր
ազնիւ Դիբալլոնի փրկութեան համար : Բայց մարդկանց բախտն Աստու-
ձեռին է : Արաբներին հալածեցին մինչեւ անապատն եւ շատերին էլ գետին
տապալեցին , թէեւ ստուերի պէս խոյս էին տալիս իմ առաջից :
Վերջապէս հասանք Բաբ էլ Սաարա (անապատի դուռ) կոչուած գիրքին ,
անելանելի լերան , մի բնական պատնէշի , որով անապատը փակուում է
քաջութեան եւ արուեստի առաջ : Որդուդ գերողներն ապաստանեցան
կիրճի ետեւ . նրան քեզ վերադարձնելու քեզ ինչպէ՞ս եւ մեզ ու հա-
մայն Ֆրանսային վերադարձնելու յոյսն էր մեր զօրավիշը , որ զօրքին էլ
խրախուսեց քաջութեան սխրալի գործերի երկցս յարձակեցան մահուան
այդ դուռի վրայ ու երկցս տեսայ , որ խուճար ծաղիկն ի զուր զահուե-
ցաւ Երանի՛ ուլքեր մեռնում են փառաւոր մահով : Ինչ կեանք , երբ պիտի
ապրինք միայն մեր բուռն ջանքերի ապարդիւն անցնելը տեսնելու եւ
ողբալու : Թող Աստուած , որ միայն ինքն է իմանում , թէ ինչո՞ւ է ուզար-
կում մեզ վրայ մեծամեծ աղէտներ , ապա ձեզ իմաստութիւն եւ ոյժ , որ
համբերութեամբ տանիք բոլոր աղէտներից այս մեծագոյնին » :

Տիկին Դիբալլոնը նամակը մի երկու անգամ կարդալուց յետոյ մի
հարցական ակնարկ ձգեց Կոմսի վրայ ապա քարացածի պէս անշարժ մը-
նաց ու յանկարծ գետին ընկաւ մեռելի նման : Յուլիան ու Լաֆէրիէրն
անկողին դրին նրան , անմիջապէս բժիշկ կանչուեցաւ ու մինչ վերջինս
աշխատում էր ուշքի բերել հիւանդին , Յուլիան մէկ կողմ տանելով
Կոմսին՝

— Ուրեմն էլ յոյս չկա՞յ ասաց , իրօ՞ք անհնար է այլեւս փրկել :

— Բոլորովին անհնար . ո՛չ մի ճար չեմ տեսնում : Բար էլ Սա-

րայի դիրքը կրկնակի յարձակման ենթարկուեցաւ : Մերոնցից շատերն ընկան ապարդիւն : Թուշուն անգամ չի կարող անցնել , քանի Սրաբներն այդ դիրքը բռնել են :

— Եւ պէտք է թոյլ տալ, որ մինչեւ վերջին էլ բռնած չնան :

— Զօրապետը գրում է, որ արեւմտեան գաւառները մաքրելուց ու կազմակերպելուց յետոյ պիտի աշխատի ետեւից յարձակում գործել այդ դիրքի վրայ ու այդպիսով տիրել :

— Ա՞յդ երբ կը լինի :

— Անշուշտ ամիսներ յետոյ գուցէ եւ մի տարուց :

— Դուք ձեր զինուորներին ճանչում էք, Պարոն Կոմս Կարելի չէ՞, արդեօք փողով, շատ փողով թէկու՞ղ ամբողջ հարստութիւնս էլ ուզեն , համո . ղել մէկ րկուսին մի խիզախ քայլ անելու :

— Փողով կարելի է աչք չլացնել երբ գէթ մի նշոյլ լինի յաջողութեան բայց ի՞նչ յոյս այլեւս, երբ զօրապետն ինչո՞ն էլ չյաջողեցաւ եւ եթէ փողով համոզելու էլ լինինք, վստահ կաց, որ մահուան գիրկն ենք գցելու խեղճերին :

Յուլիան մի քանի րոպէ մտախոհ մնալուց յետոյ մօտեցաւ Կոմսին ու ասաց .

— Քաջութիւնն որ անյաջող է անցել, անձնազոհութիւնն ի՞նչպէս : Օրինակի համար, չի՞ կարող մէկը մի կ'ըսէ մուտք գործել Սրաբներին մէջ զնալ մինչեւ նրա մօտ եւ չղթաները խորտակելով՝ կ'ըզել նրան :

— Մ'ըրիող, Ձեր եռանդն անկարելուն է ձկնում, պատասխանեց Կոմսը : Ո՛ւր է այն մարդը, որ ճարպիկութեան հետ ունենայ եւ այն աստիճան անձնուիրութիւն , որ մահն աչքի առաջ տեսնէ ու անձնատուր լինի մի երկբայելի փորձի :

— Իսկ եթէ առաջարկէի , որ այդ մարդը Դուք լինէ՞ք, Պա՛րոն Կոմս . . .

— Ի՞նչ էք ասում, Մ'ըրիող :

— Ի՞նչ եմ ասելու . . . Սրաբի չորեր կը հագնիք . արաբերէնն է՝ է՛ն էլ գիտէք, քանի որ այսքան տարի է Ալթէրիում էք, Ա՛րդ, եթէ այսպէս ծպտած յաջողիք հասնել մինչեւ Դիբալլոնի մօտ, մի՞թէ յետոյ անկարելի կը լինի այլեւս փրկել նրան : Սրան ի՞նչ կ'ասէք :

— Սի՛րելի Օրիորդ, դրան էլ այս կ'ասեմ, որ Ձեր վստահութիւնը չափազանց շոյում է ինձ բայց ոչ այն յօժարութիւնը, որով շատաւում էք Դիբալլոնի հետ միասին ինձ էլ զոհել : Վախ չունիմ մահից, որ անխուսափելի է, բայց խոստովանում եմ, որ վախում եմ ծիծաղելի դառնալուց, որ նոյնպէս անխուսափելի է :

— Բայց, ասաց Յուլիան, ամփոփելով յօնքերն անհկատելի կերպով, ի՞նչ կ'ասէիք եթէ առաջարկէի Ձեզ, որ միասին ենթարկուէինք թէ՛ ծաղրի թէ՛ մահուան եւ ընկերակցէիք ինձ այս ձեռնարկում :

— Կ'ասէի, որ մի տարօրինակ զգացում, մի տարօրինակ, կամ եթէ ոչ անիմաստ, խելքից մտքից դուրս մի զգացում, անտեղի մաքեր է ներշնչում Ձեզ : Անշուշտ մեծ երջանկութիւն է ինձ համար ուղղակեցել Ձեզ երկրի մէկ ծայրից մինչեւ միւսը, բայց այս պարագայիս, կաթում եմ, Օրիորդ, իմ պարտքն է Ձեր իսկ օգտի համար, ո՛չ միայն արգելք լինել Ձեզ իմ բոլոր ոյժերով, այլեւ անյապաղ իմաց տալ Ձեր մօրաքոյրին որ փութայ պահպանել Ձեզ Ձեր սրտի խորհուրդներին, մինչեւ որ վերադառնայ լուրջ դատողութիւնը :

Դրա վրայ Յուլիան նայեցաւ նրա երեսին ու հետեւեալը տուաւ պատասխան մեծ ու անսպասելի քրքիչով .

— Ա՛յ, հի՛մայ յաջողեցայ, ասաց Տեսա՞ք, ինչպէս խաբեցի Ձեզ : Կարծեցիք թէ լուրջ էի խօսում, Ում տեսեմ, պիտի ասեմ, որ սրամիտ Կոմս զը կափէրիէրին խաբեցի :

— Մեծ բան էր, օրիորդ, Վաղուց գիտէի, Ձեր բանն ու գործը միշտ ինձ խաբել է : Բայց, խոստովանանք լինի, Ձեր այս հանձնն ինձ դող հանեց :

— Այո՛, հանա՛ք, ասաց Յուլիան . ես էլ գիտեմ, սը անմամանակ էր, ոչ էլ կը ծածկեմ Ձեզին, որ ցաւում եմ դժբախտ Դիբալլոնի վրայ : Գնացէք եւ էլի ինչ որ լսէք, արիք իմաց տուէք ինձ :

Էափէրիէրը գլուխը քաշ գցած մեկնեցաւ : Երբ դուրս էր գալիս, Յուլիան գլուխը շուռ տուաւ զէպի նա ու մի ակնարկ գցեց անբացատրելի արհամարհանքի : Եւ տնա նրա կուտական հոգին հաւաքելով իր բոլոր ոյժերը եւ վերանայով մինչեւ ամենից բարձր աստիճանը՝ համակուեցաւ այն գերազանց վճիռներից մէկով, որոնք մի րոպէում մարդու բովանդակ նկարագիրն են երեւան հանում ու ամբողջ կեանքի ընթացքը փոխում :

Ապա ներս գնաց հիւանդի մօտ եւ տեսաւ որ խելքը գլուխն է եկել : Տիկին Դիբալլոնն երկար նայեցաւ նրան, որպէս թէ չէր ճանաչում. յետոյ երկու ձեռով բռնեց նրա գլուխն ու բերնին մօտեցնելով մրմնջեց .

— Կորցրի՛նք :

Յուլիան ջերմ կերպով համբուրեց նրան, մինչ այսերից հոսում էր արասունքը եւ առանց բերան բաց անելու զուրս եկաւ :

Գիշ յետոյ սպասաւորը ներս մտնելով՝ Տիկին Դիբալլոնին տուաւ մի տոմս, որի վրայ գրուած էր հետեւեալը .

« Սի՛րտ առ . կայ մէկը, որ կամ փրկելու է որդուդ կամ ինքն էլ նրա հետ է մեռնելու » :

Միւս օրը Սէն Մարտինը տեսնելով, որ քրոջ աղջիկը նախաճաշի չիջաւ, բարձրացաւ նրա սենեակը, ուր սեղանի վրայ դրուած հետեւեալ երկտողը .

« Սիրելի՛ քեզի, ես զնում եմ: Մինչեւ տասն օր ոչ քի ոչինչ մի ասէք: Ծերունի իւսուեֆն ինձ հետ է: Չտարակուսիք »:

Սէն Մարտէնն ու կինը կարծես շանթաւար եղան, բայց ուր լինելը չիմանալով՝ ճշտութեամբ կատարցին Յուլիայի բաղձանքը հարցնողներին ասելով թէ հիւանդ է եւ ուղքեր տեսել էին նրա վրդովումը վերջին օրերում: Իսկոյն էլ հաւատ էին ընծայում:

Ե.

Յրանկները Բաբ էլ Սաարայի դիրքը թողնելուց յետոյ եւ իբր ճակտի կողմից անառիկ, արաբներն ամբողջան ալդտեղ եւ Դէյիրան, կամ Ֆարաս Բէն Ալիքի թափափական ցեղերից մին, բանակ դրաւ ժայռերի միջին մի այնպիսի գիրքում, որ կ'արձամարհէր թշնամական ամէն յարձակում:

Կերին Դէյիրայի գիրքի մէջտեղումն էր մի անապահով վրանի տակ, ու թէեւ ձեռն ու ոտը կապ, բայց էլի մի մի Արար յաջորդաբար հսկում էին միշտ նրա վրայ:

Օրեր յետոյ Դէյիրայում լոյս ընկաւ մուրացիկ կին, որ խնդրում էր փոքր ինչ անունդ եւ գիշերն այնտեղ մնալու արտօնութիւն: Պահնորդները բնաւ չկասկածեցան եւ թոյլ տուին որ ներս մտնէ: Կարծես մին լինէր այն վհուկներից կամ գնդակներից, որոնց բանն ու պործն է չաղապարհել եւ ագէտների գերահաւատութիւնը շահագործել: Հագին ունէր շատ խեղճուկ շորեր ինչպէս բոլոր վհուկներինը, ոտներն՝ աղամարդու հին կօշիկներ, անշուշտ մէկից ողորմութիւն ստացած, շայուարը լայն ու խայտաճամուկ, ամէն գոյնի կտոր կար վրան, վերարկուն պատառ պատառ եւ այս բոլորի վրայ մի արաբական քոյունուզ, կոշտ ու կեղտոտ կտուից, որ ծածկում էր ամբողջ մարմինն նաեւ գլուխն եւ գէմքը՝ բացի աչերից:

Այս աչերն ունէին մի անօրինակ կրակոտութիւն, բայց որ գէմքն արեւակէզ էր, մարմինը կքուած եւ ձեռին էլ ունէր մի ցուպ, կարծես իրօք պառաւ լինէր:

Այս կինը գալով Դէյիրայի ա'յն տեղը, ուր կնանիքն էին, երգեց մի քանի արաբական երգեր՝ ածելով միանգամայն տեղական դայիրէն կամ դաֆը, որ կաթ էր տուել կողքիցը, եւ այսպիսով հաւաքեց իր շուրջը կնանոց, երեսոց ու աղամարդկանց: Երգը վերջացնելուց յետոյ իր փաբիկ պնակն երկարեց ներկաներին՝ ողորմութիւն հաւաքելու: Յետոյ կնանիք հարցրին, թէ բախտ գուշակել էլ կարող ես:

— Այդ իմ հին արհեստս է, պատասխանեց վհուկը: Քառասուն տարի առաջ ե'ս էի գուշակողը, որ մի աղայ Արաբների սուլթան էր լինելու: Անունն էր Աբդ էլ Կադէր:

— Ալլահ, ալլահ, բացաղանչեցին բոլորը միաբերան եւ իրաքանչիւրն ա իր բաց արած՝ երկարեց գէպի կախարդուհին, որ մէկ ձեռի գրծերն համեմատեց միւսի հետ՝ արտասանելով մի շարք անհասկանալի բառեր:

— Շուտով քեզ մի որդի կը լինի, որ շատ պիտի ապրի ու փաշայ դառնայ երեքգաւառների ասաց մի կնոջ, որ երեւում էր, որդու մատալուտ ծննդեան էր սպասում:

— Քեզ պիտի առնէ մի սեւաչուի ու թուխ մազեր, կտրիճ ու ունեւոր երիտասարդ, ասաց մի գեղաստի օրիորդի, որ իսկոյն մի զուրու՝ գրեց նրա պնակի մէջ:

— Լաւ ու հաւատարիմ որ ծառայես, տէրերդ քե'զ էլ պիտի ազատեն որդկերանցդ էլ, ասաց մի խափշիկ կնոջ, որ վշտահար ու մեղամաղձ նաւում էր իր ցեղից երկու պատանիների, որոնք սառապում էին այնտեղ տաժանակիր աշխատանքից:

Տարաբախտ կինը փող չունէր որ տաք, դրա համար էլ աչերն ուղղեց երկինք, որ Աստու օրհնութիւնն հայցէ բարի կախարդուհու վրայ:

Ապա դառնալով գէպի աղամարդիկը՝ մի ձերուհու համար մարդարէացաւ, որ Ղադիէր լինելու, մինչեւ լուսնեակն իր առաներկութեամբ չբռնէր բոլորէր. Դէյիրայի հրամանատարի համար, թէ Աբդէլկադէրը միւրաններին հաւածելու է Ափրիկէից եւ իրան հրամանատարին էլ խալիֆա կամ կառաւարիչ է կարգելու Ալմէրի: Երեսուցիքեամբ Արաբներին վաճառք հայթաթող մի Հրեայի թէ նրան կախելու են թէ՛ միանկնիքը, որոնց մատնում է եւ թէ՛ Արաբները, որոնց կողոպտում է Այս բանը մեծ ծիծաղ առաջ բերաւ Արաբների մէջ եւ բոլորի համակրանքն ուղղուեցաւ գէպի վհուկը: Վերը գալով մի վշտազգեաց Արաբի մօտ, որի գէմքին աւելի բաղձանքի արտայայտութիւն էր երեսում քան իրական ճոխութեան, վհուկն երկար ժամանակ նրա երեւին նայելուց յետոյ՝ լինեց ձեռի գէմքն ու առաջ ասաց.

— Ա'յ, բա՛խտ եմ ասում, փողի՛ բախտ:

— Փողի՛, գոչեց երիտասարդ Արաբն ու աչերն ու բախտ թիւից փայլեցան:

— Փողի՛, կրկնեց կինն, ա'յո, եւ շա'տ փողի:

— Բայց, ո'նց պիտի գտնեմ եւ ե'րբ:

— Ա'յ, ա'յ, ասաց վհուկն Արաբի ձեռքն մէկ էլ աչքից անցկուցընելով: Տե'ս, այս գիծն ընդհատուում է այստեղից. բա՛խտեմ, երեւում է, որ շատ շուտ ես տէր լինելու: այդ փոշին: Բայց աս'ս իրա՛ւ, օ՛, մատիդ այս գծիդ հետ է կապուում: Դա նշան է որ այդ փողն ստանալը քեզնից է կախուած, այսինքն՝ պիտի մա'ն գաս որ գտնես:

— Լա՛ւ, մա'ն դոմ բայց ո'րտեղ:

— Դժուարն հէնց այդ է, պատասխանեց կինը բարձրաձայն, եւ ապա այնպէս զաղտնի, որ միայն նրան լսելի լինէր, յարեց:

— Գործիչը կը գա՞յ, որ սրանց ներկայութեամբ ասեմ

Արաքն աննշտեղի կերպով աչքով արու որ չասէ, եւ մի քանի սեւ փող տուաւ նրան եւ նա մի քանի երջ եւս երգելուց յետոյ քաշուեցաւ մի կողմ եւ նստաւ ճաշելու այն բոլորից, ինչ որ ընծայեց նրան իր ասպնջականները աղատամտութիւնը: Քիչ յետոյ որ Արաքը տեսաւ որ նա բոլորովին մենակ է, գնաց ու մօտը նստաւ:

— Հիմի՞ էլ, ասաց, չես կարող ասել ինձ, թէ ո՞ր եւ ո՞նց պիտի գտնեմ այդ փողը:

— Ես էլ այդ էլի մտածում: Կատասխանեց վհուկը: Բայց նախ երկու ձեռք մէկ էլ տեսնեմ, յետոյ:

Եւ բռնելով ձեռները՝ դիտեց, երկուսն էլ ուշի ուշով զննեց ու մընչելով տարօրինակ խօսքեր:

— Կարելի՞ է, ասաց, մի քանի մազ խնդրել Նիմայ գլխիցդ:

Արաքը ձեռը տարաւ գլուխն ու մի քանի մազ պոկ տալով՝ յանձնեց վհուկին:

— Բայց դեռ մի աւելի դժուար բան էլ եմ խնդրելու, յարեց կատարգոսին: Արեւնից մի շիթ կանկարու այս մազերի վրայ:

Արաքն խնդով ծակեց բազուկն ու մազերը թաթախեց արեան մէջ: Մինչ այդ՝ կատարգոսին զանազան խիճեր, ապակու կտորներ, փոքրիկ մետաղներ դասաւորել էր շրջանաձեւ:

— Է՛լ ուրիշ բան չեմ ուզում, ասաց, բայց միայն կրակ:

Արաքն հանեց տուաւ իր կայքարը եւ կատարգոսին մազերը դրաւ նրա վրայ ու պնակը բռնեց այրուող մազերի արձակած ծուխի վրայ: Յետոյ այդ ծուխին նայելով եւ մատով նրա վրայ զանազան նշաններ դնելով՝ հարցրեց:

— Դէյիրում քրիստոնեայ կա՞յ:

— Ո՛չ, Կատասխանեց Արաքն երկմտելով:

— Է՛յ վա՛խ, ասաց կինը, երեւում է որ փողը թաղուած է հողի տակ: Ես տեսնում եմ պնակիցս, որ փողի տեղն իսկ կարող եմ անձամբ ցոյց տալ քեզ, եթէ միայն խօսք տաս, որ գոնեւո՞ւց յետոյ երկու հարիւր ղուրուշ տաս ինձ: Բայց մինչեւ որ հողը փորողը քրիստոնեայ չլինի, տեղը չգտնուի:

— Քրիստոնեայ՞... եւ չա՞տ փող է:

— Ծիշտ չգիտեմ, ծուխին նայած՝ քառասուն հազար ղուրուշի չափ պիտի լինի:

— Օ՛րբա՞ւ, գոչեց Արաքը՝ ձեռն երկարելով, կարծես ղուրուշներն էր բռնելու: Լսի՛ր, այստեղ մի քրիստոնեայ ունինք բայց գերի է ինչպէս նրան ինծի հետ վերցնեմ:

— Զգիտեմ, Կատասխանեց վհուկը: Ծանր քոնն է, դու պիտի մտածես:

— Լսի՛ր, ասաց Արաքը, կէս գիշերից մինչեւ լոյս գերու պահ-

նորդն ես եմ: Ի՞նչ ես կարծում, կարո՞ղ ենք այդքան միջոցում գործը վերջացնել:

Կախարդը կարծես խորասուզուեցաւ մի տեսակ յափտակութեան ու խոկումների մէջ:

— Տեսնում եմ, ասաց վերջապէս, մի մեծ ծառ գաշտի միջին կողքին մի դեռ եմ տեսնում, իսկ գետի ափին կիսափուլ պարսպի բեկորներ: Պարսպի տակից անցնում է մի արագավաղ աղբիւր: Փողը թաղուած է այդ տեղերում: Հետաւորութիւնը չառ շտու երկու, երկուսուկէս ժամ լինի ախտեղից:

— Գիտեմ, չառ լաւ գիտեմ, ի՞նչ տեղ եւ ասում, գոչեց Արաքը: Մի ուղտ ունիմ Սախամբայի, Մախարե կոչուած ուղտերից, տասն օրուայ ճանապարհը մի օրում են կտրում: Գերու հետ կէս գիշերին կը հեծնենք, առաջուց կը վախեց եմ իրան, որ ձայն չհանե՛ք թէ չէ կ'օպանենեմ, եւ կը դնանք գանձի տեղը: Գանձը դուրս հանե՛ք թէ չէ՛...

— Յետո՞յ:

— Հետոյ գանձի տեղում իրան կը թաղեմ:

Վհուկն հակառակ իր կամքին ցնցուեցաւ:

— Բա՛ն, էլ ինչո՞ւ թաղես, ասաց:

— Որովհետեւ մտնելները չեն խօսում:

— Դու էլ իրաւունք ունիս, ասաց կախարգն: Զանգարուքն: Բայց վախն էլ իրան կը փակէ, կարծում եմ միայն վախեցնելը բաւ է:

— Լա՛ւ, տո՛ւ յոյժմ գնանք: Որն որ ձեռնտու լինի, այն էլ կ'անենք: Եւ մեկնեցան:

Կէս գիշերին, հենց որ Ռիչարդի պահնորդը գնաց քնելու, մի քան լօք Արաքը, որի անունն էր Բու Մոհամմէդ, վեր կենալով որ նրան յաջորդէ, անցաւ այն տեղով, ուր վհուկն էր քնել, կանաչեցից փոքր ինչ հեռու, եւ ոտքովը մէտեց նրան: Վհուկը զարթեց ու սուս փուս հետեւեցաւ Արաքին:

Երբ մտան Ռիչարդի վրանը, նա քեւած էր, բայց Բու Մոհամմէդը զարթեցրեց իսկոյն:

— Զարթի՛ր, ասաց, չո՛ւն քրիստոնեայ, տեղ պիտի գնանք:

— Ո՛ւր պիտի գնանք, հարցրեց Ռիչարդն աչերը պնդութեամբ:

Այդ ժամանակ մօտեցաւ նրան վհուկն՝ հազիւ նշմարուելով լուսնի աղօտ լուսուն:

— Ինչ որ տեսնես, ինչ որ լսես, ասաց նրան, ձայն չհանես, որ փրկուիս: Ո՛ւր որ էլ տանի քեզ, գնա. ոչ մի բանի վրայ չզարմանաս:

— Այս ի՞նչ է, գոչեց Ռիչարդը:

— Լռի՛ր, ասում եմ քեզ. ընդհատեց վհուկը սաստելով. Ասում եմ, քո փրկութեան համար է:

— Ապրիս, լաւ խօսում ես հետք, նկատեց Արաբը:

Ռիչարդն իսկոյն կայծակի պէս վեր թռաւ տեղիցը:

— Հրամայի՛ր, ասաց Արաբին. ուր գնաս, կը գամ հետդ:

Նոյն րոպէին Բու Մոհամէդն արձակեց նրա կապերը. թեւիցը բռնեց բերաւ ա՛յնտեղ, ուր արագալուրդ ուղտն էր, բարձրացրեց դրա ուղտի վրայ, նրա ետեւից էլ վհուկին և՛ առջեւ ում էլ ինքը նստելով՝ անքան կենդանուն քչեց տարաւ անծանօթ կածաններով, ուր ապահով էր որ չէր պատահիլ Դէյրիայի պահնորդներին: Ուղտ հեծնելուս վհուկը մի ապահով րոպէ դտաւ թէ չէ՝ մօտեցաւ Ռիչարդին. ու ֆրանսերէն ասաց նրան այս երկու բառերը. «Լուռ եւ խոչեմ»:

Իրօք որ ժայռերի միջով կարծես թռչում էր ուղտը, և՛ գրեթէ մի ժամ էլ չանցաւ, որ դաշտ իջաւ: Քիչ էլ անցաւ և՛ հասաւ գետն. ուր պարսպի բեկորներն էին, աղբիւրն ու ծառը: Այստեղ ցած իջան ու ուղտը կապեցին մացառներին: Վհուկը մի ցուպ առնելով ձեռը՝ զանազան շըրջանակներ ու այլ մտացածին դէպք քաշելով օդին մէջ ու գետնի երեսին՝ վերջն էլ գետնին խփելով մի յատուկ նշանի՝ աւերակի ստորին անկիւնի կողքին՝

— Այստեղ, ասաց:

Բու Մոհամէդն Ռիչարդի ձեռը տալով հետը բերած մի բա՛ն՝

— Գնա՛, փորի՛ր այդ տեղը, ասաց սպառնադին:

— Պարոնիդ խօսքին ականջ դիր, եթէ ուզում ես փրկուել, յարեց վհուկը կտրուկ կերպով:

Ռիչարդը գործիքն առաւ ձեռքը յուղմունքից դողալով, և՛ տիրոջ ցոյց տուած տեղը գնալով՝ սկսաւ փորել. հողը շատ չուտ էր տեղի սաւ լիս բահին:

— Որեւէ հետաքրքրական բան գտնելիս մեղ ասա՛, ձայնեց վհուկը որ Բու Մոհամէդի հետ միասին կանգնած էր ուղտի մօտ:

Արաբի արիւնն եռ էր գալիս. քրտինքն հոսում էր ճակտից, իսկ հողին տարուբերում էր յոյսի ու երկիւղի միջեւ:

Մի քաւորդ ժամի չափ փորելուց յետոյ Ռիչարդն աղաղակեց.

— Ոսկի փող եմ տեսնում հողի մէջ:

— Էլ մի՛ փորեր, ձայն տուաւ վհուկը:

Եւ դիմելով Արաբին, որ Ռիչարդի աղաղակը լսեց թէ չէ՝ խելացնողի պէս վեր թռաւ տեղից:

— Ահա ասաց, գանձը գտնուեցաւ: Բայց չահդ պահանջում է, որ քրիստոնեան չիմանայ, թէ փողն ի՛նչքան է: Նրան հեռացրաւ և՛ ինքդ հաւաքիր:

— Ինչ ես կարծում. աւելի լաւ չի՞ լինիլ, որ սպանեմ տեղն ու տեղը, հարցրեց Արաբն ատրձանակն պոնելով ձեռը:

— Ո՛չ, ո՛չ, աղաղակեց վհուկն ու ժգնորէն: Չգո՛յն, թէ չէ՝ ամէն քան տակն ու վրայ կ'անես: Թերեւս հարկ լինի, որ իր սկսած գործն ինքն էլ զլուխ բերէ:

Բու Մոհամէդը վախենալով, որ վստայէ իր գիտը, Ռիչարդի թեւից բռնեց ու բերաւ այն ծառի մօտ, ուր վհուկն էր կանգնած:

— Բայց գոնէ կապեմ, ասաց:

— Անշուշտ, պատասխանեց, թէ չէ՝ կարող է փախչել: Հեծցրաւ ուղտի վրայ ու կապիր: Ես էլ կը հակեմ: Իսկ երկու հարիւր զուրուշա չմոռանա:

— Անհո՛գ կաց, պատասխանեց արաբը, որ հաւան կենալով տրուած խորհրդին՝ քրիստոնեային հեծցրեց ուղտի վրայ ու իրանն ու ձեռները կապեց: Իսկ ինքը գալով բացուած փոսի մօտ՝ ղէնքերը ցած դրաւ փոսի ափին ու ցատկեց մէջը:

Նոյն րոպէին վհուկն երկու ծառի տուաւ և՛ մացառների խորքից գուրս խոյացան իսկոյն երկու հոգի, որ Բու Մոհամէդի ղէնքերն յափշտակելով՝ ուղղեցին գէպի նրա գլուխն ու սպառնացին:

— Չշարժիս, թէ չէ՝ մեռած ես:

Վհուկն էլ նոյն պահուն արձակեց ուղտը, մի ոստումով բարձրացաւ վրան ու անցնելով փոսի կողով՝ ձայնեց Արաբին, որ գտնուում էր փոսի մէջ:

— Բո՛ւ Մոհամէդ, ես քեզ առաջուց ասացի, որ քառասուն հազար զուրուշի գանձ ես գտնելու: Այդ բոլորն անթերի այդ հորի մէջ է և՛ քոնն է, բայց այս գերուց ձեռքաշիր այլեւս լաւ կը լինի՝ մէկ էլ ոտ չկոխես ծարատ բէն Ալիզի Դէյրիայում:

Եւ այս ասելով՝ մի կից տուաւ ուղտին, որ կարծես թեւ առած թռչում էր դաշտի միջով: Այն երկու մարդիկն էլ մի մի ձի նստելով՝ որոնց սանձից բռնել էին, դուրս եկան դաշտի միջից ու գոչեցին արաբին, որ ղէնքերդ որոնիր փորած տեղիցդ հարիւր քայլ այս կողմ:

Իրար ետեւից վրայ հասնող այս գիպուածները քիչ մնաց գտնեցնէին խեղձ Բու Մոհամէդին:

Բայց խելքը որ գլուխն հաւաքեց և՛ տեսաւ որ իրանից զատ ոչ ոք չկար ու ապահով էր, օկսաւ փորել, անթերի գտաւ քառասուն հազար զուրուշի գաղղիական ոսկեգրամ. ապա հարիւր քայլ անցաւ՝ ղէնքերն էլ գտաւ ու վերջապէս ուրիշ ո՛րտեղ ասես գնաց՝ բացի Դէյրիայից, ուր գտնուեց փախուստից յետոյ անտարակոյս մահն էր սպասում նրան:

է.

Արագոտն Մախարէն, որ աւելի թուշում էր յան արշաւում մի ժամից հասաւ առաջին գիւղը, որ ֆրանկներէ ձեռին է :

Այդտեղ ցած իջան ուղտից եւ Ռիչարդը նետուեցաւ Յուլիայի ծընկերների մէջ ու երկրպագեց նրան որպէս մի ազատարար աստուածութեան, չկարենալով զսպել իր արտասնքները, արտասնքներ սքանչացման :

Յուլիան հանեց վհուկի ցնցոտիները, լուաց երեսի ներկերը, որոնցմով բոլորովին կերպարանափոխ էր եղած. վրան առաւ իր սիրուն անագոնը կամ ուրիշ խօսքով, կանանց ասպետական հանդերձ : Մի քանի րոպէ յետոյ եկան հասան երկու ձիաւոր աջակիցներն էլ, որոնց մին ծերունի հաւատարիմ իւսուֆն էր, իսկ միւսն էլ նրա ազգականներից մինը, եւ այսպիսով ամբողջ խումբը բռնեց ուղղակի Ալթէրի ճանապարհը :

Ալթէրիից դուրս գալուց ճիշտ տասն օր յետոյ Յուլիան կրկին ժամանեց այս քաղաքը :

Ամենից առաջ գնաց իսլոյն իր քեռակիներէ մօտ. որ, ինչպէս եւ Պարոն Սէն Մարտէնը, անքուն անհանգիստ է՝ չէին զիմանում եւ պատրաստուում էին միւս օրն եւ եթ լուրջ հեռաժողովներն եր սկսելու Յուլիային գտնելու համար :


Երկուսին էլ ջերմագին համբուրելուց յետոյ՝ ինքը, քեռին ու Ռիչարդը՝ երեքը միասին վազեցին Տիկին Դիբալունի մօտ. որ յուսահատութիւնից այլեւս անճանաչելի էր դառել, Որդուն տեսաւ թէ չէ՝ այնպէս բռնուեցաւ ջղածդային սաստիկ դողով, որ բոլորը վախեցան թէ մի՞ գուցէ յանկոտժակիի գայ, ժամերով չարչարուում էր, «զաւակս» ասելու եւ չէր կարողանում, վերջապէս դուրս եկաւ բերնից այդ բառը բայց ահագին ճիչով եւ հեղեղուտ արտասունքի հետ :

Իսկ երբ իմացաւ Յուլիայի անձնութիւնը, թոյլ տուաւ որդուն նետուելու նրա գիրկը :

— Աստուած միայն կարող է վարձատրել այս գործն ասաց : Ես՝ ամբողջ կեանքս էլ տամ քեզ քիչ է : Ի՞նչպէս վարձատրեմ քեզ :

— Անուանելով ինձ Ձեզ դուստր՝ պատասխանեց Յուլիան չիկնելով :

Երկու օր յետոյ Ալթէրիում յայտարարուեցաւ պ. Ռիչարդ Դիբալունի ամուսնութիւնն օրիորդ Յուլիա Բոսսայի հետ : Ամուսնութեան օրինաթուղթն ստորագրեց Վիլոյ զօրավարը : Բայց պատմութիւնը չի աւում, թէ արդեօք նրա թիկնապահը, կոմս դը Լա Ֆէրիէրն էլ հարսանիքում կա՞ր թէ չէ :



3021

2013

